Բռնությունը

երիտասարդ զույգերի շրջանում

հետազոտություն

Բռնությունը

երիտասարդ զույգերի շրջանում

հետազոտություն

Երևան, 2019

Բռնությունը երիտասարդ զույգերի շրջանում. հետզոտություն

Սույն հետազոտությունը իրականացվել է «Սեր և հարգանք» արշավի գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ և Էրազմուս պլյուս ծրագրի ֆինանսավորմամաբ իրականացված «Սեր և հարգանք՝ կանխելով դեռահաս զույգերի շրջանում բռնությունը» ծրագրի շրջանակներում:

Հետազոտությունն իրականացնող՝ «Բրեվիս» ընկերություն
Շապիկի ձևավորումը՝ «Զարտպրինտ» ՍՊԸ

© «Հասարակություն առանց բռնության» ՀԿ, 2019
Վաղարշյան 26, բն. 2, 0012 Երևան
+374 91 42 81 92, +374 60 44 81 92
team@swv.am
www.swv.am

1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1 ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 2

2 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

3 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 3

ԸՆՏՐԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐ 3

4 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 6

ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ԿԱՄ ԱՆՑՅԱԼՈՒՄ ՈՒՆԵՑԱԾՆԵՐԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ 6

ԲՈՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ 6

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ 9

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ 11

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ 13

ՍԵՌԱԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ 14

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ 16

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ 17

ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵԼԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ 19

ԲՈՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ 21

2 ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտությունը նպատակ ունի ուսումնասիրել 16-26 տարեկան տարիքային խմբի երիտասարդների շրջանում բռնության տարածվածությունը: Զեկույցում ներկայացված են բռնությունների ընկալումն ինչպես բոլոր հարցվածների շրջանում, այնպես էլ՝ ըստ տարիքային խմբերի և սեռի: Հետազոտության միջոցով բացահայտվել է Հայաստանում բնակվող երիտասարդ զույգերի շրջանում բռնության տարբեր տեսակների տարածվածությունը, ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրի գծով կատարվել է առանձին վերլուծություն: Բացի այդ, քանի որ բռնությունները կարող են բացասական հետևանք թողել դրանց ենթարկվածների կյանքի հետագա ընթացքի և հոգեկան առողջության վրա, ուսումնասիրել են նաև բռնությունների հետևանքները և դրանք հաղթահարելու եղանակները:

3 ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հարցումներն իրականացվել էին CAWI (Computer Assisted Web Interviewing) եղանակով: 2018 թվականի փետրվարի 8-ից մարտի 26-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հարցաթերթն ուղարկվել է մոտ 159,000 էլեկտրոնային հասցեներին, որոնցից 4,162-ի օգտատերերը սկսել են լրացնել հարցաթերթը, բայց նրանցից միայն 1,000-ն է այն լրացրել մինչև վերջ:

Հարցաթերթը մշակվել է՝ հաշվի առնելով երկրի առանձնահատկությունները և ներառում է 42 դատողություններ բռնության դեպքերի մասին: Այդ փոփոխականները խմբավորվել են բռնությունների 4 հիմնական խմբերի մեջ՝ հոգեբանական, սեռական, ֆիզիկական և տնտեսական: Բացի այդ՝ հարցաթերթում ընդգրկված հարցերը թույլ են տվել նաև ուսումնասիրել երկու հատուկ ենթախմբեր՝ վերահսկող վարքի առկայությունը և տեխնոլոգիաների միջոցով բռնության իրականացումը:

Ընտրանքի նկարագիր

Ընտրանքում պատահական եղանակով ընդգրկվել են Երևանի և Հայաստանի տարբեր մարզերի բնակիչներ: Ընտրանքի բաշխումն ըստ տարիքի և շրջանների ունի հետևյալ տեսքը:

Աղյուսակ 1. Ընտրանքի բաշխումն ըստ աշխարհագրական շրջանների և տարիքային խմբերի:

N	Մարզ	Տարիքային խմբեր		
		16-20	21-26	Ընդամենը
1	Երևան	151	423	574
2	Արագածոտն	7	21	28
3	Արարատ	12	29	41
4	Արմավիր	13	45	58
5	Գեղարքունիք	17	34	51
6	Լոռի	13	45	58
7	Կոտայք	22	45	67
8	Շիրակ	14	39	53
9	Սյունիք	6	10	16
10	Վայոց Ձոր	5	9	14
11	Տավուշ	17	23	40
	Ընդամենը	277	723	1,000

Հետազոտության արդյունքները կշռվել են՝ դրանք գլխավոր համախմբությանը համապատասխանեցնելու համար: ԲՐԵՎԻՍ ընկերության բազմամյա հետազոտությունները ցույց են տալիս, որ մարզերի միջև տարբերությունները ավելի քիչ են և կարող են անտեսվել, իսկ Երևանի և մարզերի միջև տարբերությունները նշանակալի են: Այդ պատճառով մարզերը խմբավորվել են և կշռելիս դրանցում ստացված պատասխանները համարվել են մեկ կլաստերի պատասխաններ: Տարիքային խմբերը, որոնցով կատարվել է կշռում՝ 16-20 և 21-26 տարեկան տարիքային խմբերն են:

Բացի այդ՝ կշռումը կատարվել է նաև ըստ սեռի՝ հաշվի առնելով առկա բնակչության մեջ, և հատկապես այդ տարիքային խմբում, տղամարդկանց փոքր թիվը:

Ընդ որում՝ ԲՐԵՎԻՍ ընկերության նախկին հետազոտությունները ցույց են տալիս, որ ըստ կրթության՝ ընտրանքը կշռելու անհրաժեշտություն չկա, քանի որ պատասխանների միջև տարբերությունները վիճակագրորեն նշանակալի չեն:

Աղյուսակ 2. Ընտրանքի բաշխումն ըստ սեռատարիքային խմբերի և Հայաստանի տարածաշրջանների:

Սեռ	Տարիք	Պայմանական աշխարհագրական բաժանում	
		Երևան	Մարզեր
Տղամարդ	16-20 տարեկան	4.7%	3.6%
	21-26 տարեկան	13.9%	10.8%
Կին	16-20 տարեկան	10.4%	9.0%
	21-26 տարեկան	28.4%	19.2%

Աղյուսակ 3. Հայաստանի Հանրապետության առկա բնակչության բաշխումը*:

Սեռ	Տարիք	Պայմանական աշխարհագրական բաժանում	
		Երևան	Մարզեր
Տղամարդ	16-20 տարեկան	37,373	85,942
	21-26 տարեկան	53,187	104,075
Կին	16-20 տարեկան	42,092	79,705
	21-26 տարեկան	63,502	105,424

**Տվյալները՝ համաձայն Ազգային վիճակագրական ծառայության:*

Աղյուսակ 4. Հայաստանի Հանրապետության առկա բնակչության բաշխումն ըստ սեռատարիքային խմբերի և Հայաստանի տարածաշրջանների:

Սեռ	Տարիք	Պայմանական աշխարհագրական բաժանում	
		Երևան	Մարզեր
Տղամարդ	16-20 տարեկան	6.5%	15.0%
	21-26 տարեկան	9.3%	18.2%
Կին	16-20 տարեկան	7.4%	14.0%
	21-26 տարեկան	11.1%	18.5%

Հաշվի առնելով ընտրանքի բաշխման և Հայաստանի Հանրապետության առկա բնակչության բաշխման տարբերությունները՝ հաշվարկվել են ուղղիչ կշիռները, որոնք ներկայացված են ստորև: Վերլուծությունը կատարվել է կշռված տվյալների բազայի հիման վրա, եթե այլ բան նշված չէ:

Աղյուսակ 5. Հետազոտության կշիռները:

Սեռ	Տարիք	Պայմանական աշխարհագրական բաժանում	
		Երևան	Մարզեր
Տղամարդ	16-20 տարեկան	1.39	4.17
	21-26 տարեկան	0.67	1.68
Կին	16-20 տարեկան	0.71	1.55
	21-26 տարեկան	0.39	0.96

4 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Անձնական հարաբերություններ ունեցողների կամ անցյալում ունեցածների մասնաբաժինը

Ստորև ներկայացված է ներկայում ինչ-որ մեկի հետ անձնական հարաբերություններ ունեցող կամ անցյալում ունեցած հարցվողների մասնաբաժինը ըստ սեռատարիքային խմբերի և պայմանական աշխարհագրական բաժանման:

Գծապատկեր1. Ինչ-որ մեկի հետ անձնական հարաբերություններ ունեցողների կամ անցյալում ունեցածների մասնաբաժինը:



Գծապատկերից երևում է, որ 21-26 տարիքային խմբի 62%-ը ունի կամ ունեցել է հարաբերություններ՝ ի հակադրություն 16-20 տարիքային խմբի 42%-ի: Նաև Երևանում անձնական հարաբերություններ ունեցողների կամ ունեցածների մասնաբաժինը փոքր-ինչ մեծ է մարզերի ցուցանիշից:

Բռնության տեսակները

Սույն հետազոտության շրջանակներում ստացված տվյալների հիման վրա բռնության 42 փոփոխականները խմբավորվել են 4 խմբերում և 2 ենթախմբերում: Խմբերն են՝ հոգեբանական, ֆիզիկական, տնտեսական և սեռական բռնությունը, իսկ ենթախմբերը՝ վերահսկողությունն ու տեխնոլոգիական միջոցներով կատարվող բռնությունը:

Աղյուսակում ներկայացված է բռնության տարբեր տեսակներին ենթարկված հարցվածների թիվը (չկշռված և կշռված տվյալների բազայում): Առնվազն մեկ տեսակի բռնության ենթարկվել են հարցվածներից 509-ը: Չկշռված տվյալների բազայի վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ բռնության յուրաքանչյուր տեսակից ենթարկվել են հարցվողների բավականաչափ մասնաբաժինը, որպեսզի վերլուծության որակը բարձր լինի, իսկ կշռված տվյալների բազայի օգնությամբ պարզում ենք, թե ամբողջ բնակչության շրջանում բռնությունը որքան տարածում ունի:

Աղյուսակ 6. Առնվազն մեկ անգամ բռնության ենթարկվածների քանակը:

Բռնության տեսակը	Բռնության ենթարկվածների քանակն ընտրանքում (չկշռված)	Բռնության ենթարկվածների քանակն ընտրանքում (կշռված)	%

Հոգեբանական բռնություն	506	485	49%
Ֆիզիկական բռնություն	124	129	13%
Տնտեսական բռնություն	144	149	15%
Սեռական բռնություն	128	129	13%
Վերահսկողություն	505	485	49%
Տեխնոլոգիական միջոցներով կատարվող բռնություն	337	330	33%
Առնվազն մեկ տեսակի բռնություն	**509**	**490**	**49%**

Ստացված արդյունքները ցույց են տալիս, որ վերահսկողությունն ու հոգեբանական բռնությունը իրար հետ կոռելացվում են: Այն հարցվողները, ովքեր հայտնել են, որ ենթարկվել են հոգեբանական ճնշման, նաև նշել են, որ վերահսկվել են իրենց զուգընկերոջ/ամուսնու կողմից:

Ստորև ներկայացված աղյուսակներում պարզ երևում է, որ տղամարդիկ ավելի շատ են հայտնում բռնությունների մասին, ինչը կարող է հետևանք լինել նրա, որ վերջիններս ավելի անկեղծ են և չեն վախենում:

Աղյուսակ 7. Առնվազն մեկ անգամ բռնության ենթարկվածների մասնաբաժինը տարբեր խմբերում (անձնական հարաբերություններ ունեցողների կամ անցյալում ունեցածների թվից):

Բռնության տեսակ	**Տարածաշրջան**		**Գենդեր**		**Տարիք**	
	Երևան	Մարզեր	Տղամարդ	Կին	16-20 տարեկան	21-26 տարեկան
Հոգեբանական ճնշում	90%	92%	91%	92%	88%	93%
Ֆիզիկական ճնշում	18%	28%	24%	25%	23%	25%
Տնտեսական ճնշում	29%	28%	33%	22%	29%	28%
Սեռական ճնշում	12%	13%	13%	13%	11%	14%
Վերահսկողություն	90%	92%	91%	92%	88%	93%
Տեխնոլոգիական	59%	64%	61%	63%	61%	62%
Ցանկացած բռնություն	**50%**	**49%**	**54%**	**45%**	**38%**	**58%**

Աղյուսակ 8. Առնվազն մեկ անգամ բռնության ենթարկվածների մասնաբաժինը տարբեր խմբերում (ամբողջ ընտրանքի թվից):

Բռնության տեսակ	**Տարածաշրջան**		**Գենդեր**		**Տարիք**	
	Երևան	Մարզեր	Տղամարդ	Կին	16-20 տարեկան	21-26 տարեկան
Հոգեբանական ճնշում	49%	48%	53%	44%	37%	57%
Ֆիզիկական ճնշում	10%	15%	14%	12%	10%	15%
Տնտեսական ճնշում	16%	15%	19%	11%	12%	17%
Սեռական ճնշում	12%	13%	13%	13%	11%	14%
Վերահսկողություն	49%	48%	53%	44%	37%	57%
Տեխնոլոգիական	32%	34%	35%	31%	26%	38%
Ցանկացած բռնություն	50%	49%	54%	45%	38%	58%

Աղյուսակ 9-ում ներկայացված է բռնության տարբեր դրվագների տարածվածությունը ընդհանուր ընտրանքում և ըստ սեռի: Աղյուսակը ցույց է տալիս, որ տղամարդիկ ավելի անկեղծ են իրենց հանդեպ իրականացված բռնությունների մասին հայտնելիս: Ամենից շատ հանդիպող բռնությունները կապված են հոգեբանական ճնշման և վերահսկողության հետ: Բոլոր հարցվածների 44%-ը հայտնում է, որ իրենց զուգընկերը/ամուսինը միշտ ցանկություն ունի տեղյակ լինել հարցվողի գտնվելու վայրի և զբաղմունքի մասին:

Աղյուսակ 9. Բռնության տարբեր դրվագների տարածվածություն ամբողջ ընտրանքում և ըստ սեռային խմբերի (ներկայացված են առավել տարածվածները):

Բռնության դրվագը	**Ընդհանուր ընտրան-քում**	**Տղամարդ-կանց շրջանում**	**Կանանց շրջանում**

Նա միշտ ուզում էր տեղյակ լինել, թե որտեղ եք և ինչ եք անում:	44%	46%	42%
Հիվանդագին ձևով խանդել է (օր.՝ «Ու՞մ հետ էիր խոսում, ձեր մեջ հաստատ մի բան կա»):	24%	29%	19%
Վերահսկել է Ձեր հեռախոսը, ստուգել է եկած զանգերը, նամակները:	23%	25%	21%
Հարաբերության ընթացքում կամ բաժանումից հետո նա Ձեզ հետապնդել է, անհանգստացրել է զանգերով, SMS-ներով կամ էլ. նամակներով:	22%	21%	23%
Ձեզ ասել է, որ զզվել է Ձեր պահվածքից, և որ Դուք պետք է փոխեք այն:	20%	20%	20%
Այնպես է արել, որ Ձեզ մեղավոր զգաք նրա համար, որ Ձեր ընկերների կամ այլ անձանց հետ եք ժամանակ անցկացրել՝ իր հետ լինելու փոխարեն:	18%	20%	15%
Ձեզ ստիպել է չշփվել ինչ-որ մեկի հետ, ով Ձեր ընկերներից է եղել նախկինում:	14%	11%	17%
Բաժանման համար Ձեզ է մեղադրել է, ստել է բաժանման պատճառների մասին:	13%	14%	11%
Ձեզ էմոցիոնալ շանտաժի է ենթարկել:	12%	12%	12%
Նրա ծախսերը միշտ Դուք եք հոգացել, մինչդեռ նա երբեք Ձեր ծախսերը չի հոգացել:	12%	16%	8%
Փորձել է պարտադրել որոշակի կանոններ, պլանավորել օրը, ամեն ինչը հարմարեցրել է իրեն:	11%	10%	12%
Ձեզ հրել կամ ապտակել է:	11%	11%	10%
Նվաստացրել է Ձեզ հոգեբանորեն՝ ասելով որ «Դուք ոչինչ չարժեք»:	11%	8%	13%
Փորձել է սահմանափակել Ձեր շփումը Ձեր ընտանիքի և ընկերների հետ:	10%	9%	11%
Բաժանումից հետո փորձել է Ձեզ հետ հանդիպել՝ հակառակ Ձեր կամքի, «պատահական» հանդիպումներ է կազմակերպել:	10%	11%	9%
Տարբեր սարքերի կամ ծրագրերի միջոցով հետևել է Ձեզ:	10%	14%	5%
Ձեր կամքին հակառակ Ձեզ համբուրել կամ դիպչել է:	10%	11%	8%
Մտադրված Ձեզ վախեցրել կամ սպառնացել է:	7%	6%	8%
Ձեռքերով կամ ոտքերով խփել է Ձեզ:	7%	8%	6%
Ձեր մասին ստեր է տարածել այլ մարդկանց մոտ:	6%	7%	6%
Այնպիսի բաներ է արել, որոնց արդյունքում կասկածի տակ է դրվել Ձեր մտավոր ունակությունները	6%	6%	6%
Բաժանումից հետո այնպես է արել, որ Ձեր ընդհանուր ընկերները Ձեզ հետ չխոսեն:	5%	7%	4%
Քաշել է Ձեր մազերից, պոկել է Ձեր մազերը:	5%	7%	4%
Սպառնացել է Ձեզ սպանել:	5%	7%	4%
Դիտմամբ փչացրել է ձեզ համար կարևոր նշանակություն ունեցող իրեր:	5%	7%	3%

Ինչ վերաբերում է բռնությունների շարունակականությանը, ապա հետազոտության արդյունքները վկայում են, որ հոգեբանական ճնշումներն ու վերահսկողությունը ավելի մեծ հակում ունեն հաճախ կրկնվող, շարունակական բնույթ կրել, քան բռնությունների այլ տեսակները: Ֆիզիկական բռնությունների մասին հայտնածների 68%-ը նշել է, որ այդպիսի դրվագները շարունակական չեն եղել, այն դեպքում երբ սեռական բռնությունների մասին հայտնածների 55%-ի մոտ մեկ անգամ է եղել սեռական բռնության դեպք:

Գծապատկեր2. Բռնության տարբեր տեսակների տեղի ունենալու շարունակականությունը:



Հոգեբանական բռնություն

Անձնական հարաբերությունների մասին հայտնած հարցվածների 91%-ը (ամբողջ ընտրանքի 49%-ը) ենթարկվել է հոգեբանական բռնության (Աղյուսակ 6), ընդ որում՝ նրանց 87%-ը առնչվել է հոգեբանական ճնշման և բռնությունների շարունակական դրվագների հետ (Գծապատկեր 2):

Գծապատկեր 3-ում ներկայացված բաշխումը վկայում է այն մասին, որ Երևանում ու մարզերում հոգեբանական բռնությունների զոհ դառնալու հավանականությունը գրեթե նույնն է: Մեծ տարբերություններ են նկատվում տարիքային խմբերում: 21-26 տարեկանների 57%-ը գոնե մեկ անգամ ենթարկվել է հոգեբանական բռնության, այն դեպքում երբ 16-20 տարեկանների 37%-ն է ենթարկվել հոգեբանական բռնության իրենց զուգընկերի կամ ամուսնու կողմից: Հարկ է նշել, որ այս թվերը ներկայացվում են ամբողջ ընտրանքից և 16-20 տարեկանների՝ բռնություններին ենթարկվածների ավելի ցածր մասնաբաժինը պայմանավորված է նրանով, որ նրանց թվից ավելի քչերն ունեն կամ ունեցել են անձնական հարաբերություններ:

Ինչպես և բռնությունների մյուս տեսակների դեպքում, տղամարդկանց ավելի մեծ մասնաբաժինն է հայտնել դրանց ենթարկվելու մասին:

Գծապատկեր3. Հոգեբանական բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում:



Գծապատկեր4. Հոգեբանական բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում (անձնական հարաբերությունների փորձ ունեցող հարցվածների թվից):



Հոգեբանական բռնությունների դրվագները ներկայացված են ստորև՝ դասակարգված ամենահաճախ հանդիպողից ամենահազվադեպ հանդիպողը: Ամենից հաճախ հանդիպում է ագրեսիվ խանդը և կոպիտ վերահսկողությունը, երբ ամուսինը կամ զուգընկերը ցանկանում է միշտ տեղյակ լինել, թե որտեղ է բռնության մասին հայտնածը, վերահսկում է վերջինիս հեռախոսը, կասկածում է նրան դավաճանության մեջ: Ավելի հազվադեպ են հանդիպում կեղծ մեղադրանքների ներկայացումը, զրպարտելը, նկարներ մոնտաժելը և դրանք առանց թույլտվության օգտագործելը:

Աղյուսակ 10. Հոգեբանական բռնության տարբեր դրվագների տարածվածություն ամբողջ ընտրանքում և ըստ սեռային խմբերի:

Բռնության դրվագը	Ընդհանուր ընտրան-քում	Տղամարդ-կանց շրջանում	Կանանց շրջանում
Նա միշտ ուզում էր տեղյակ լինել, թե որտեղ եք և ինչ եք անում:	44%	46%	42%
Հիվանդագին ձևով խանդել է (օր.՝ «Ու՞մ հետ էիր խոսում, ձեր մեջ հաստատ մի բան կա»):	24%	29%	19%
Վերահսկել է Ձեր հեռախոսը, ստուգել է եկած զանգերը, նամակները:	23%	25%	21%

Հարաբերության ընթացքում կամ բաժանումից հետո նա Ձեզ հետապնդել է, անհանգստացրել է զանգերով, SMS-ներով կամ էլ. նամակներով:	22%	21%	23%
Ձեզ ասել է, որ զզվել է Ձեր պահվածքից, և որ Դուք պետք է փոխեք այն:	20%	20%	20%
Այնպես է արել, որ Ձեզ մեղավոր զգաք նրա համար, որ Ձեր ընկերների կամ այլ անձանց հետ եք ժամանակ անցկացրել՝ իր հետ լինելու փոխարեն:	18%	20%	15%
Ձեզ ստիպել է չշփել ինչ-որ մեկի հետ, ով Ձեր ընկերներից է եղել նախկինում:	14%	11%	17%
Բաժանման համար Ձեզ է մեղադրել է, ստել է բաժանման պատճառների մասին:	13%	14%	11%
Ձեզ էմոցիոնալ շանտաժի է ենթարկել:	12%	12%	12%
Փորձել է պարտադրել որոշակի կանոններ, պլանավորել օրը, ամեն ինչը հարմարեցրել է իրեն:	11%	10%	12%
Նվաստացրել է Ձեզ հոգեբանորեն՝ ասելով որ «Դուք ոչինչ չարժեք»:	11%	8%	13%
Փորձել է սահմանափակել Ձեր շփումը Ձեր ընտանիքի և ընկերների հետ:	10%	9%	11%
Բաժանումից հետո փորձել է Ձեզ հետ հանդիպել՝ հակառակ Ձեր կամքի, «պատահական» հանդիպումներ է կազմակերպել:	10%	11%	9%
Տարբեր սարքերի կամ ծրագրերի միջոցով հետևել է Ձեզ:	10%	14%	5%
Մտադրված Ձեզ վախեցրել կամ սպառնացել է:	7%	6%	8%
Ձեր մասին ստեր է տարածել այլ մարդկանց մոտ:	6%	7%	6%
Այնպիսի բաներ է արել, որոնց արդյունքում կասկածի տակ է դրվել Ձեր մտավոր ունակությունները	6%	6%	6%
Բաժանումից հետո այնպես է արել, որ Ձեր ընդհանուր ընկերները Ձեզ հետ չխոսեն:	5%	7%	4%
Սպառնացել է Ձեզ սպանել:	5%	7%	4%
Բաժանումից հետո երկար ժամանակ անհանգստացրել է նաև Ձեր նոր զուգընկերոջը:	4%	4%	4%
Բաժանումից հետո Ձեր անձնական կյանքի մասին տեղեկատվություն է տարածել:	3%	2%	3%
Ձեր կամքին հակառակ Ձեր նկարները մոնտաժել է և տարածել:	2%	3%	1%
Ձեր անձնական նկարները կամ կոնտակտային տվյալները տարածել է համացանցում կամ էրոտիկ բնույթի գովազդների կայքերում:	2%	4%	1%
Ձեր նկատմամբ մտադրված կեղծ քրեական բողոքներ է ներկայացրել:	2%	3%	1%
Նա միշտ ուզում էր տեղյակ լինել, թե որտեղ եք և ինչ եք անում:	44%	46%	42%

Ֆիզիկական բռնություն

Անձնական հարաբերությունների մասին հայտնած հարցվածների 24%-ը (ամբողջ ընտրանքի 13%-ը) ենթարկվել է ֆիզիկական բռնության (Աղյուսակ 6), ընդ որում՝ նրանց 32%-ը առնչվել է ֆիզիկական բռնությունների շարունակական դրվագների հետ (Գծապատկեր 2):

Գծապատկեր5. Ֆիզիկական բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում:



Գծապատկեր6. Ֆիզիկական բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում (անձնական հարաբերությունների փորձ ունեցող հարցվածների թվից):



Գծապատկեր 5-ից պարզ է դառնում, որ ինչպես և հոգեբանական բռնության դեպքում, ֆիզիկական բռնության ավելի հաճախ ենթարկվում են 21-26 տարեկան տարիքային խմբի հարցվածները: Այս դեպքում նշանակալի է նաև Երևանի և մարզերի տարբերությունը: Մարզերում ֆիզիկական բռնությունն ավելի տարածված է, քան Երևանում:

Ֆիզիկական բռնության դրվագներից առավել տարածվածը հրելն ու ապտակելն է, որի մասին հայտնել է հարցվածների 11%-ը: Մարմնին այրվածքներ հասցնելը, կոկորդը սեղմելը և ծանր առարկայով հարվածելն ավելի հազվադեպ հանդիպող բռնության դրսևորումներ են:

Աղյուսակ 11. Ֆիզիկական բռնության տարբեր դրվագների տարածվածություն ամբողջ ընտրանքում և ըստ սեռային խմբերի:

Բռնության դրվագը	Ընդհանուր ընտրան-քում	Տղամարդ-կանց շրջանում	Կանանց շրջանում
Ձեզ հրել կամ ապտակել է:	11%	11%	10%
Ձեռքերով կամ ոտքերով խփել է Ձեզ:	7%	8%	6%

Քաշել է Ձեր մազերից, պոկել է Ձեր մազերը:	5%	7%	4%
Սեղմել է Ձեր կոկորդը՝ խեղդելու սպառնալիքով:	4%	4%	3%
Ձեզ միտումնավոր ֆիզիկական վնաս է հասցրել:	4%	5%	2%
Ձեր գլուխը խփել է այլ առարկաների կամ պատի:	4%	5%	2%
Խփել է Ձեզ ծանր առարկայով, կամ ծանր առարկա է շպրտել Ձեզ վրա:	3%	5%	1%
Ձեր դեմ օգտագործել է դանակ, ատրճանակ, այլ զենք (ներառյալ հոսանք):	3%	5%	1%
Ձեր մարմնին այրվածքներ է հասցրել:	2%	4%	1%

Ի տարբերություն հոգեբանական բռնությանը, ֆիզիկական բռնության դրվագները պակաս շարունակական են և հարցվողների մեծամասնությունը հայտնել է միայն մեկ այդպիսի դեպքի մասին: Մյուս կողմից՝ ֆիզիկական բռնությունները շարունակական բնույթ կրելու դեպքում բռնությունների ենթարկվածները հայտնում են բռնության ու ճնշումների տարբեր տեսակների կիրառման մասին:

Տնտեսական բռնություն

Անձնական հարաբերությունների մասին հայտնած հարցվածների 28%-ը (ամբողջ ընտրանքի 15%-ը) ենթարկվել է տնտեսական բռնության (Աղյուսակ 6), ընդ որում՝ նրանց 45%-ը առնչվել է տնտեսական ճնշման և բռնությունների շարունակական դրվագների հետ (Գծապատկեր 2):

Տնտեսական բռնությունների մասին ավելի շատ հայտնում են տղամարդիկ և 21-26 տարիքային խմբի ներկայացուցիչները: Ընդ որում՝ Երևանի ու մարզերի միջև տարբերությունները նշանակալի չեն:

Տնտեսական բռնությունների տեսանկյունից ուսումնասիրվել են երկու տեսակի բռնության դրվագներ. Առաջինը ֆինանսական ծախսեր հոգալն է, երկրորդը բռնության ենթարկվածի համար արժեքավոր իրի կանխամտածված ոչնչացումը: Երկու դրվագների մասին էլ տղամարդիկ ավելի շատ են հայտնում, քան կանայք: Անձնական հարաբերություններ ունեցող կամ նախկինում ունեցած տղամարդկանց 33% (ամբողջ ընտրանքի 19%-ը) և կանանց միայն 23%-ը (ամբողջ ընտրանքի 11%-ը) հայտնում են տնտեսական բռնություններին ենթարկվելու մասին:

Գծապատկեր7. Տնտեսական բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում:



Գծապատկեր8. Տնտեսական բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում (անձնական հարաբերությունների փորձ ունեցող հարցվածների թվից):



Ամբողջ ընտրանքում տղամարդկանց 16%-ը և կանանց միայն 8%-ն է հայտնել, որ իրենք հոգացել են իրենց զուգընկերների/ամուսինների բոլոր ծախսերը: Տղամարդկանց 7%-ը և կանանց 3%-ը հայտնել է նաև, որ իրենց գույքը ոչնչացվել է զուգընկերոջ կամ ամուսնու կողմից:

Սեռական բռնություն

Սեռական բռնությունն, ինչպես և տնտեսական բռնությունը համեմատաբար հազվադեպ է հանդիպում:

Անձնական հարաբերությունների մասին հայտնած հարցվածների միայն 24%-ը (ամբողջ ընտրանքի 13%-ն) է ենթարկվել սեռական բռնության (Աղյուսակ 6), ընդ որում՝ նրանց 43%-ը առնչվել է սեռական բռնությունների շարունակական դրվագների հետ (Գծապատկեր 2):

Գծապատկեր9. Սեռական բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում:



Գծապատկեր10. Սեռական բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում (անձնական հարաբերությունների փորձ ունեցող հարցվածների թվից):



Ինչպես երևում է գծապատկերում, սեռական բռնությունների ենթարկվում են հավասարապես կանայք և տղամարդիկ, 16-20 և 21-26 տարեկան տարիքային խմբերի ներկայացուցիչները և Երևանի ու մարզերի բնակիչները: Ժողովրդագրական խմբերում առանձնանում են միայն 21-26 տարեկան հասակի հարցվածները, ովքեր փոքր-ինչ ավելի շատ են հայտնել սեռական բռնությունների ենթարկվելու մասին:

Ինչպես երևում է Աղյուսակ 12-ում, Սեռական բռնությունների առավել տարածված դրվագը որևէ մեկի կամքին հակառակ համբուրելը կամ դիպչելն է: Սեռական բռնությունների մյուս դրսևորումները անհամեմատ ավելի հազվադեպ են հանդիպում:

Աղյուսակ 12. Սեռական բռնության տարբեր դրվագների տարածվածություն ամբողջ ընտրանքում և ըստ սեռային խմբերի:

Բռնության դրվագը	Ընդհանուր ընտրան-քում	Տղամարդ-կանց շրջանում	Կանանց շրջանում

Ձեր կամքին հակառակ Ձեզ համբուրել կամ դիպչել է:	10%	11%	8%
Ձեզ ստիպել է սեռական հարաբերություն ունենալ իր հետ՝ Ձեր կամքին հակառակ:	5%	7%	4%
Թեև անընդհատ մերժել եք, բայց նա ստիպել է Ձեզ ուղարկել Ձեր մերկ կամ ինտիմ հատվածների նկարներ:	5%	4%	5%
Ձեր սեքսուալության, ցանկությունների, նախընտրությունների մասին խիստ անձնական մանրամասներ է տարածել:	3%	4%	2%
Վիրավորել/վնասել է Ձեզ՝ Ձեր կամքին հակառակ սեռական հարաբերություններ ունենալու ընթացքում:	3%	4%	1%

Վերահսկողության բռնություն

Սույն հետազոտության շրջանակներում վերահսկողության տակ պահելը առանձնացվել է որպես բռնության դրսևորումների առանձին խումբ, քանի որ դրանք ամենատարածվածն են և ունեն ընդհանուր հատկանիշներ: Բռնության այդ տեսակի դրսևորումներին հատուկ է հոգեբանական ներազդեցությունը, կոպիտ վերահսկողությունը և սպառնալիքներ անելը:

Անձնական հարաբերությունների մասին հայտնած հարցվածների 91%-ը (ամբողջ ընտրանքի 49%-ը) ենթարկվել է վերահսկողության բռնության (Աղյուսակ 6), ընդ որում՝ նրանց 86%-ը առնչվել է կոպիտ վերահսկողության շարունակական դրվագների հետ (Գծապատկեր 2):

Գծապատկեր11. Վերահսկողության բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում:



Գծապատկեր12. Վերահսկողության բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում (անձնական հարաբերությունների փորձ ունեցող հարցվածների թվից):



Աղյուսակ 13. Վերահսկողության բռնության տարբեր դրվագների տարածվածություն ամբողջ ընտրանքում և ըստ սեռային խմբերի:

Բռնության դրվագը	Ընդհանուր ընտրան-քում	Տղամարդ-կանց շրջանում	Կանանց շրջանում
Նա միշտ ուզում էր տեղյակ լինել, թե որտեղ եք և ինչ եք անում:	44%	46%	42%
Հիվանդագին ձևով խանդել է (օր.՝ «Ու՞մ հետ էիր խոսում, ձեր մեջ հաստատ մի բան կա»):	24%	29%	19%
Վերահսկել է Ձեր հեռախոսը, ստուգել է եկած զանգերը, նամակները:	23%	25%	21%
Հարաբերության ընթացքում կամ բաժանումից հետո նա Ձեզ հետապնդել է, անհանգստացրել է զանգերով, SMS-ներով կամ էլ. նամակներով:	22%	21%	23%
Ձեզ ասել է, որ զզվել է Ձեր պահվածքից, և որ Դուք պետք է փոխեք այն:	20%	20%	20%
Այնպես է արել, որ Ձեզ մեղավոր զգաք նրա համար, որ Ձեր ընկերների կամ այլ անձանց հետ եք ժամանակ անցկացրել՝ իր հետ լինելու փոխարեն:	18%	20%	15%
Ձեզ ստիպել է չշփվել ինչ-որ մեկի հետ, ով Ձեր ընկերներից է եղել նախկինում:	14%	11%	17%
Փորձել է պարտադրել որոշակի կանոններ, պլանավորել օրը, ամեն ինչը հարմարեցրել է իրեն:	11%	10%	12%
Փորձել է սահմանափակել Ձեր շփումը Ձեր ընտանիքի և ընկերների հետ:	10%	9%	11%
Բաժանումից հետո փորձել է Ձեզ հետ հանդիպել՝ հակառակ Ձեր կամքի, «պատահական» հանդիպումներ է կազմակերպել:	10%	11%	9%

Վերահսկողության բռնության համար հատկանշական է այն, որ առանձին դրսևորումներ ավելի հատուկ են կանանց, քան տղամարդկանց: Այսպես, այլ մարդկանց հետ շփվելն արգելելու մասին հայտնում են կան հարաբերություններ ունեցող կանանց 32%-ը (ամբողջական ընտրանքի 17%-ը) և տղամարդկանց միայն 20%-և (ամբողջական ընտրանքի 11%-ը): Մյուս կողմից տղամարդկանց 54%-ը (ամբողջական ընտրանքի 29%-ը) հայտնում է հիվանդագին խանդի ենթարկվելու մասին, իսկ կանանց միայն 35%-ը (ամբողջական ընտրանքի 19%-ն) է ենթարկվել բռնության այդ դրսևորմանը:

Տեխնոլոգիական միջոցներով իրականացվող բռնություն

Անձնական հարաբերությունների մասին հայտնած հարցվածների61%-ը (ամբողջ ընտրանքի 33%-ը) ենթարկվել է տեխնոլոգիական միջոցներով իրականացվող բռնության (Աղյուսակ 6), ընդ որում նրանց 60%-ը առնչվել է բռնության այդ տեսակի շարունակական դրվագների հետ (Գծապատկեր 2):

Տեխնոլոգիական միջոցներով բռնության ենթարկելը, ինչպես և բռնության այլ տեսակները, ավելի հաճախ է հանդիպում 21-26 տարեկան տարիքային խմբում, քան 16-20 տարեկան տարիքային խմբում: Բռնության դրսևորումների այս խմբում էլ մարզերի ու Երևանի միջև տարբերությունները չնչին են:

Տեխնոլոգիական միջոցներով բռնության ենթարկելը առանձնացվել է որպես ենթախումբ, քանի որ բռնության դրվագները, որոնք կապված են ժամանակակից հեռահաղորդակցության միջոցների և տեխնոլոգիաների կիրառման հետ, բավականին հաճախ են հանդիպում: Դրա մասին է վկայում նաև առանձին դրվագների մասին հայտնելու հաճախականությունը, որը ներկայացված է Աղյուսակ 14-ում:

Գծապատկեր13. Տեխնոլոգիական միջոցներով իրականացվող բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում:



Գծապատկեր14. Տեխնոլոգիական միջոցներով իրականացվող բռնության ենթարկվածների մասնաբաժինը սեռային, տարիքային և աշխարհագրական խմբերում (անձնական հարաբերությունների փորձ ունեցող հարցվածների թվից):



Ինչպես երևում է Աղյուսակ 14-ում, տեխնոլոգիաների կիրառման միջոցով բռնության իրականացումը կապվում է ոչ միայն բռնության զոհի հեռախոսի նկատմամբ վերահսկողություն տարածելով, այլ տարբեր սարքավորումների միջոցով նրա գտնվելու տեղը պարզելու հետ:

Աղյուսակ 14. Տեխնոլոգիական միջոցներով իրականացվող բռնության տարբեր դրվագների տարածվածություն ամբողջ ընտրանքում և ըստ սեռային խմբերի:

Բռնության դրվագը	Ընդհանուր ընտրան-քում	Տղամարդ-կանց շրջանում	Կանանց շրջանում
Վերահսկել է Ձեր հեռախոսը, ստուգել է եկած զանգերը, նամակները:	23%	25%	21%
Հարաբերության ընթացքում կամ բաժանումից հետո նա Ձեզ հետապնդել է, անհանգստացրել է զանգերով, SMS-ներով կամ էլ. նամակներով:	22%	21%	23%

Տարբեր սարքերի կամ ծրագրերի միջոցով հետևել է Ձեզ:	10%	14%	5%
Թեև անընդհատ մերժել եք, բայց նա ստիպել է Ձեզ ուղարկել Ձեր մերկ կամ ինտիմ հատվածների նկարներ:	5%	4%	5%
Ձեր կամքին հակառակ Ձեր նկարները մոնտաժել է և տարածել:	2%	3%	1%
Ձեր անձնական նկարները կամ կոնտակտային տվյալները տարածել է համացանցում կամ էրոտիկ բնույթի գովազդների կայքերում:	2%	4%	1%

Բռնությունների հետևանքով առաջացող բարդությունները և դրանց հաղթահարումը

Քնի խանգարումը և կենտրոնանալու երկարատև անկարողությունը հատկանշական են գրեթե բռնության բոլոր տեսակներին:

Գծապատկեր15. Առողջական խնդիրները, որոնց բռնությունների զոհերը առնչվում են՝ ըստ բռնությունների խմբերի:



Գծապատկեր16. Առողջական խնդիրները, որոնց բռնությունների զոհերը առնչվում են՝ ըստ բռնությունների ենթախմբերի:



Ստորև ներկայացված են առողջության բարդությունները և դրանց համապատասխանող բռնությունների տեսակները: Գծապատկերից ակնհայտ է դառնում, որ հոգեբանական ճնշումների դեպքում հնարավոր է բոլոր բարդությունների ի հայտ գալը:

Գծապատկեր17. Բռնությունների տեսակները, որոնց ենթարկվել են առողջական խնդիրները ունեցողները:



Բռնության խնդրի լուծումը

Բռնության ենթարկվելու դեպքում շատերը փորձում են ավարտել հարաբերությունները՝ այդպիսով լուծելով խնդիրը: Բռնության դադարեցման այս եղանակը հիմնականն է բոլոր տեսակի բռնությունների դեպքում:

Հատկանշական է, որ բռնությունների ենթարկվող մարդկանց մի մեծ քանակ ոչ մի քայլ չի ձեռնարկում կամ ձեռնարկել բռնություններին վերջ տալու համար:

Գծապատկեր18. Բռնությունները դադարեցնելու համար ձեռնարկված քայլերը՝ ըստ բռնությունների խմբերի:



Գծապատկեր19. Բռնությունները դադարեցնելու համար ձեռնարկված քայլերը՝ ըստ բռնությունների ենթախմբերի:



Ինչ վերաբերում է արդյունավետությանը, այն տատանվում է 67-78% միջակայքում, ինչը փաստում է, որ բռնության ենթարկվողները, եթե քայլեր են ձեռնարկում, կարող են դրական փոփոխություններ ակնկալել:

Գծապատկեր20. Բռնությունները դադարեցնելու համար ձեռնարկված քայլերի հետևանքով տեղի ունեցած փոփոխությունները:



5 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԸ

Համար	**ՀԱՐՑ**	**ՊԱՏԱՍԽԱՆ**	Պատասխանեք հետևյալ հարցին Հաջորդ հարցը
1.	Ունե՞ք կամ ունեցել եք անձնական հարաբերություններ ինչ-որ մեկի հետ: (օր. Զուգընկեր ունեցել եք, թե ոչ: Ամուսնացած եղել եք, թե ոչ):	- այո 1	2
		- ոչ 2	**D0**

	Ժողովրդագրական տվյալներ		
D0.	Գենդեր	- տղամարդ 1 - կին 2	D1
D1.	Տարիք		D2
D2.	Կրթություն	- տարրական դպրոց 1 - միջնակարգ դպրոց - ավագ դպրոց, միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (քոլեջ, տեխնիկում, ուսումնարան) 2 - համալսարան 3	D3

			4	
D3.	Զբաղվածություն	- գործազուրկ - ավագ դպրոցի աշակերտ - ուսանող - մայրության/հայրության արձակուրդի մեջ գտնվող - աշխատող - անհատ ձեռներեց - հաշմանդամության ունեցող անձ	1 2 3 4 5 6 7	D4
D4.	Ընտանեկան կարգավիճակ	- միայնակ, այս պահին առանց զուգընկերոջ - ունեք զունգընկեր, սակայն միասին չեք ապրում - ունեք զուգընկեր և համատեղ եք բնակվում, սակայն ամուսնացած չեք - ամուսնացած - այրի - ամուսնալուծված	1 2 3 4 5 6	D5

D5.	Ձեր հոր կրթական մակարդակը	- տարրական դպրոց - միջնակարգ դպրոց - ավագ դպրոց, միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (քոլեջ, տեխնիկում, ուսումնարան) - համալսարան	1 2 3 4	D6
D6.	Ձեր մոր կրթական մակարդակը	- տարրական դպրոց - միջնակարգ դպրոց, միջին մասնագիտական ուսումնական հաստատություն (քոլեջ, տեխնիկում, ուսումնարան) - ավագ դպրոց - համալսարան	1 2 3 4	D7
D7.	Ձեր ծնողները...	- միասին են ապրում - նրանցից մեկը կամ երկուսը մահացել են - միասին չեն ապրում - ամուսնալուծված են	1 2 3 4	D8
D8.	Մարզ	- Երևան - Արագածոտն - Արարատ - Արմավիր - Գեղարքունիք - Լոռի - Կոտայք - Շիրակ - Սյունիք - Վայոց ձոր	1 2 3 4 5 6 7	D9

		- Տավուշ	8 9 10 11	
D9.	Ձեր բնակավայրի բնակչության թվաքանակը	- Մինչև 5.000 - 5.000-19.999 - 20.000 – 99.999 - 100.000 և ավելի	1 2 3 4	D10
D10.	Ձեր ծնողների ծննդավայրը: Ձեր ծնողները ծնվել են՝	- Երկու ծնողներս էլ ծնվել են Հայաստանի Հանրապետությունում - Ծնողներից մեկը ծնվել է արտասահմանում - Երկու ծնողներն էլ ծնվել են արտասահմանում	1 2 3	END/D11/D12
D11	**Ծրագիր: D10=2 պատասխանի դեպքում** Նշել արտերկրում ծնված ծնողի ծննդավայրը:	-		
D12	**Ծրագիր: D10=3 պատասխանի դեպքում** Նշել արտերկրում ծնված ծնողների ծննդավայրը:	Մայր՝ Հայր՝		

N.	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ	Պատասխան եք հետևյալ հարցին Հաջորդ հարցը
S1.	Հաշվի առնելով, որ ցանկացած հարաբերություններում կան և՛ լավ, և՛ վատ ժամանակահատվածներ, այժմ խնրում ենք պատասխանել մի քանի հարցի Ձեր զուգընկերոջ(ների) հետ հարաբերությունների մասին: Կարո՞ղ եք նշել, թե արդյո՞ք երբևիցե հայտնվել եք ստորև թվարկված իրավիճակներում (Ձեր ներկա կամ նախկին զուգընկերոջ(երի) հետ): **(Ծրագիր. Եթե S1 հարցում գոնե մեկ «այո» պատասխան կա, անցեք S2 հարցին, հակառակ դեպքում՝ անցեք D0 հարցին:)**		S2 or K1
S2.	Քանի՞ անգամ է դա պատահել միևնույն զուգընկերոջ հետ: Մե՞կ անգամ թե՞ շարունակաբար: Եթե այն պատահել է մեկից ավելի զուգընկերների հետ, խնդրում ենք ընտրեք այն հարաբերությունը, որի ընթացքում իրավիճակն առավել հաճախ է պատահել: **(PROG: SHOW ONLY SITUATIONS MENTIONED BY RESPONDENT IN QS1)**		K1

	S1.	S2. Այո		
	Ոչ	Մեկ անգամ	Շարունակաբար	
1) Նա միշտ ուզում է տեղյակ լինել, թե որտեղ եք և ինչ եք անում:	1	1	2	

2) Հարաբերության ընթացքում կամ բաժանումից հետո նա Ձեզ հետապնդել է, անհանգստացրել է զանգերով, SMS-ներով կամ էլ. նամակներով:	2	1	2	
3) Փորձում է սահմանափակել Ձեր շփումը Ձեր ընտանիքի և ընկերների հետ:	3	1	2	
4) Ձեզ չի թողել մտնել ձեր բնակարանը/տունը, որտեղ դուք համատեղ բնակվում էիք:	4	1	2	
5) Ձեր նկատմամբ մտադրված կեղծ քրեական բողոքներ է ներկայացրել:	5	1	2	
6) Նվաստացրել է Ձեզ հոգեբանորեն՝ ասելով որ «Դուք ոչինչ չարժեք» մեկնաբանություններ է թողել Ձեր արտաքին տեսքի հետ կապված՝ «դու պետք է նիհարես», «դու մկաններ չունես», «դու հիմար ես», «դու այնքան պարզմիտ ես» և այլն:	6	1	2	
7) Մտադրված Ձեզ վախեցրել կամ սպառնացել է	7	1	2	
8) Այնպիսի բաներ է արել, որոնց արդյունքում կասկածի տակ է դրվել Ձեր մտավոր ունակությունները (դիտավորյալ շփոթեցրել է, անհանգստացրել է, թաքցրել է իրեր և այլն):	8	1	2	
9) Ձեզ էմոցիոնալ շանտաժի է ենթարկում (օր.՝ եթե սա չանես, կբաժանվեմ քեզնից, եթե դու ինձ լքես, ես ինքնասպան կլինեմ):	9	1	2	
10) Նրա ծախսերը միշտ Դուք եք հոգացել, մինչդեռ նա երբեք Ձեր ծախսերը չի հոգացել:	10	1	2	

11) Բաժանումից հետո Ձեր անձնական կյանքի մասին տեղեկատվություն է տարածել (օր.՝ Ձեր մարմնի, սեռական նախասիրությունների մասին և այլ տեղեկություններ, որոնք Դուք նրան առանձին էիք ասել):	11	1	2	
12) Բաժանումից հետո այնպես է արել, որ Ձեր ընդհանուր ընկերները Ձեզ հետ չխոսեն:	12	1	2	
13) Ձեզ ստիպել է չշփել ինչ-որ մեկի հետ, ով Ձեր ընկերներից է եղել նախկինում:	13	1	2	
14) Ձեր մասին ստեր է տարածում այլ մարդկանց մոտ:	14	1	2	
15) Վերահսկում է Ձեր հեռախոսը, ստուգում է եկած զանգերը, նամակները:	15	1	2	
16) Բաժանումից հետո երկար ժամանակ անհանգստացրել է նաև Ձեր նոր զուգընկերոջը:	16	1	2	
17) Ձեզ ասել է, որ զզվել է Ձեր պահվածքից, և որ Դուք պետք է փոխեք այն:	17	1	2	
18) Դիտմամբ փչացնում է ձեզ համար կարևոր նշանակություն ունեցող իրեր:	18	1	2	
19) Ձեր կամքին հակառակ Ձեր նկարները մոնտաժում է և տարածում:	19	1	2	
20) Բաժանման համար Ձեզ է մեղադրում, ստում է բաժանման պատճառների մասին:	20	1	2	

	21) Թեև անընդհատ մերժում էի, բայց նա ստիպում էր ինձ ուղարկել իմ մերկ կամ ինտիմ հատվածների նկարներ, սեքսուալ բնույթի լուսանկարներ, կամ նա ինքն էր ցանկանում նման լուսանկար նկարել, կամ նա նման լուսանկար նկարել է իմ կամքին հակառակ:	21				
N.	**ՀԱՐՑ**	**ՊԱՏԱՍԽԱՆ**				Պատասխան եք հետևյալ հարցին Հաջորդ հարցը
S1.	Հաշվի առնելով, որ ցանկացած հարաբերություններում կան և՛ լավ, և՛ վատ ժամանակահատվածներ, այժմ խնրում ենք պատասխանել մի քանի հարցի Ձեր զուգընկերոջ(ների) հետ հարաբերությունների մասին: Կարո՞ղ եք նշել, թե արդյո՞ք երբևիցե հայտնվել եք ստորև թվարկված իրավիճակներում (Ձեր ներկա կամ նախկին զուգընկերոջ(երի) հետ): **(Ծրագիր. Եթե S1 հարցում գոնե մեկ «այո» պատասխան կա, անցեք S2 հարցին, հակառակ դեպքում՝ անցեք D0 հարցին:)**					S2 or K1
S2.	Քանի՞ անգամ է դա պատահել միևնույն զուգընկերոջ հետ: Մե՞կ անգամ թե՞ շարունակաբար: Եթե այն պատահել է մեկից ավելի զուգընկերների հետ, խնդրում ենք ընտրեք այն հարաբերությունը, որի ընթացքում իրավիճակն առավել հաճախ է պատահել: **(PROG: SHOW ONLY SITUATIONS MENTIONED BY RESPONDENT IN QS1)**					K1
		S1.	**S2** Այո			

	Ոչ	Մեկ անգամ	Շարունակաբար	
22) Ձեր սեքսուալության, ցանկությունների, նախընտրությունների մասին խիստ անձնական մանրամասներ է տարածել (ինչպես նաև կեղծ տեղեկություններ) :	22	1	2	
23) Այնպես է արել, որ Ձեզ մեղավոր զգաք նրա համար, որ Ձեր ընկերների կամ այլ անձանց հետ եք ժամանակ անցկացրել, փոխարենն իր հետ լինեք:	23	1	2	
24) Տարբեր սարքերի կամ ծրագրերի միջոցով հետևել է Ձեզ:	24	1	2	
25) Ձեր ընկերների մոտ Ձեր նկատմամբ՝ բռնաբարության/իրեն իր կամքին հակառակ սեռական հարաբերությունների հարկադրելու կեղծ մեղադրանքներ է հնչեցրել:	25	1	2	
26) Հիվանդագին ձևով խանդել է (օր.՝ «Ու՞մ հետ էիր խոսում, ձեր մեջ հաստատ մի բան կա»):	26	1	2	
27) Ձեր կամքին հակառակ Ձեզ համբուրել կամ դիպչել է:	27	1	2	
28) Ձեզ ստիպում է սեռական հարաբերություն ունենալ իր հետ՝ Ձեր կամքին հակառակ:	28	1	2	
29) Բաժանումից հետո փորձում է Ձեզ հետ հանդիպել՝ հակառակ Ձեր կամքի, «պատահական» հանդիպումներ է կազմակերպում:	29	1	2	
30) Ձեր անձնական նկարները (օր.՝ մերկ կամ համբուրվելիս) կամ կոնտակտային տվյալները տարածում է համացանցում կամ էրոտիկ բնույթի գովազդների կայքերում:	30	1	2	

31) Ձեզ հրել կամ ապտակել է:	31	1	2		
32) Քաշել է Ձեր մազերից, պոկել է Ձեր մազերը:	32	1	2		
33) Ձեզ միտումնավոր ֆիզիկական վնաս է հասցրել (օր.՝ գցում է աստիճաններից, խփում է Ձեր ոտքերին, շարժվող մեքենայի միջից Ձեզ դուրս է հրում):	33	1	2		
34) Ձեռքերով կամ ոտքերով խփել է Ձեզ:	34	1	2		
35) Ձեր գլուխը խփել է այլ առարկաների կամ պատի:	35	1	2		
36) Խփել է Ձեզ ծանր առարկայով, կամ ծանր առարկա է շպրտել Ձեզ վրա:	36	1	2		
37) Ձեր դեմ օգտագործել է դանակ, ատրճանակ, այլ զենք (ներառյալ հոսանքը):	37	1	2		
38) Ձեր մարմնին այրվածքներ է հասցրել:	38	1	2		
39) Սեղմել է Ձեր կոկորդը՝ խեղդելու սպառնալիքով:	39	1	2		
40) Սպառնացել է Ձեզ սպանել:	40	1	2		
	41	1	2		

	41) Փորձել է պարտադրել որոշակի կանոններ, պլանավորել օրը (ե՞րբ, ի՞նչ, որտե՞ղ գնալ և այլն), ամեն ինչը հարմարեցնում է իրեն, նույնիսկ եթե այդ ամենը հակառակ է Ձեր կամքին:					
	42) Վիրավորել/ վնասել է Ձեզ՝ Ձեր կամքին հակառակէ սեռական հարաբերություններ ունենալու ընթացքում: Կամ դարձե՞լ է բռնի է, Ձեր կամքին հակառակ սեռական հարաբերություններ ունենալու փորձի ընթացքում:	42	1	2		
	43) ՎԵՐՈՆՇՅԱԼԻՑ ՈՉ ՄԵԿԸ	43	-	-	-	**D0**

N.	ՀԱՐՑ	ՊԱՏԱՍԽԱՆ		Պատասխան եք հետևյալ հարցին
S3.	Վերևում նկարագրված իրավիճակներից որևէ մեկը շարունակվե՞լ է երկար ժամանակ (օր.՝ մի քանի ամիս)	- Այո	1	S4
		- Ոչ	2	**D0**
S4.	Վերը թվարկված իրավիճակների և վարքագծի արդյունքում հարաբերության ընթացքում/հետո ստիպված եղե՞լ եք պայքարել հետևյալ խնդիրներ դեմ:	- քնի խանգարում, անքնություն - աշխատանքի, ուսման վրա կենտրոնանալու երկարատև անկարողություն - սրտխառնոց, գլխապտույտ - անորեքսիա, քաշի կորուստ - վախ սեփական կյանքի համար, վախ բռնություններից - ինքնասպանության մասին մտքեր	1 2 3 4 5 6	S5
S5.	Ինչ-որ քայլեր ձեռնարկե՞լ եք վերոնշյալ իրավիճակներից դուրս գալու համար: Եթե այո, ապա ի՞նչ:	- բաժանվել եք նրանից - պատմել եք Ձեր ընկերներից մեկին - պատմել եք Ձեր ծնողներից մեկին - տեղեկացրել եք Ձեր զուգընկերոջ	1 2 3	S6

		կրթական հաստատությանը/ գործատուին նրա վարքի մասին - քրեական բողոք եք ներկայացրել ոստիկանություն - զանգահարել եք Թեժ գիծ օգնության ծառայություն	4 5 6	
		- ոչինչ չեք արել	7	**DO**
S6.	Իրավիճակից դուրս գալուն ուղղված Ձեր վերոնշյալ քայլերից հետո ինչ-որ բան փոխվե՞լ է:	- այո, իրավիճակը ավելի շտկվեց	1	**DO**
		- ոչ, ավելի բարդացավ - փոփոխություն չեղավ	2 3	**DO**



love & respect
Preventing Teen Dating Violence

Erasmus+

Society Without Violence